



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Բ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱՂԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՂԳԱՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Եսինք ասկէց առաջ թէ մեր ազգին ուսումնական կրթութիւնը պէտք է սկսի նախնական դպրոցներուն բարեկարգութենէն, եւ փոքր իշատէ հասկըցողքինք այս բարեկարգութեան ինչ աստիճանի պակաս լինելը սովորական դպրոցներու մէջ: Այժմ անսնեմք թէ գլխաւորապէս որ բաներն են որ կրնան դպրոց մը բարեկարգ ընել:

Նախ այս գիտնալու է որ մեր խօսքը այն տեսակ մեծ եւ փոքր դպրոցներու համար չէ՝ ուր որ աշակերտք ոչ միայն ուսում կառնուն:

այլ եւ կերակուր կուտեն ու գէշեր ցորեկ կրնակին, անոնք եթէ չունենան իրենց համար հաստատուն ու իմաստուն կանոնադրութիւն ու կարգաւորութիւն մը, ոչ միայն շուտով կխայտառակուին, այլ եւ շատ չեն գիմանար՝ կխակուին: Մեր խօսքը այն փոքր դպրատանց համար է որ գրեթէ ամէն տեղ՝ ամէն քաղաք կգտնուին, եւ ամէն մարդ, հարուստ՝ աղքատ, իւր զաւակը անպատճառ անոնց մէկուն մէջ կգնէ որ գոնէ հայերէն կարդալ գրել մը սովորի. ըսել է թէ ասոնց վրայ է մեր բոլոր ազգին ընդհանուր ուսում:

նառույթեան յոյսը, ուստի եւ արժանի են մեծ մտադրութեան եւ բարեկարգութեան:

Ազգային նախնական դպրոցներուն մէջ ընդհանրապէս երեք բան կ'պահուի. ա) ոճ դասառութեան, բ) ճիշդ կանոնադրութիւն, եւ գ) օգտակար գործադրութիւն պատժոց եւ վարձուց: Քանի որ այս պակասութիւնները մեր դպրոցներէն չվերնան, ոչ երբէք կարելի պիտի լինի անոնցմէ այն օգուտները քաղել՝ ինչ որ ծնօղք կ'սպասեն: Տեսնեմք թէ ինչպէս:

Եւ նախ դասառութեան ոճին վրայ խօսիմք: — Դասառութեան ոճը այն ատեն աղէկ ու գովելի է՝ երբոր տղան անով քիչ ատենէն առաջ կերթայ սովորած բաներուն մէջ, սովորածը չմոռնար, եւ սովորելիքներուն դիւրութիւն կ'լինի: Մինչեւ ցայժմ սակաւութիւն են յոյժ այն դպրոցները, ուր որ հին պակասաւոր ոճը մէկդի դրուած ու նոր դասառութեան ոճը մտած լինի. անոր համար է որ սնակ, քերական, հեգերէն, սաղմոս կարգալը դեռ ամէն տեղ հաստատուն սովորութիւն է, եւ շատ տղայոց ուսման ընթացքը ասոնցմով կ'սկսի ու կ'վերջանայ, վասն զի իրեք չորս հինգ տարի ալ կ'քըշէ: — Ախնա այն տղայոց անցուցած պարապ ժամանակին:

Պնակէն սկսեալ մինչեւ կտակարան ու նարեկ տալը տղայոց ձեռքը՝ ինչ բանի համար է. — ոչ ապաքէն անոնց անսխալ ու համարձակ կարգալ սովորեցընելու համար: Արդ ինչպէս կ'լինի որ եւրօպական ոճով բռնուած դպրոցներուն մէջ այդ անսխալ ու համարձակ կարգալ սովորիլը քանի մը ամիս միայն կտեւէ, եւ միայն մեր ու Տաճկաց դպրոցներուն մէջ տարիներու կկարօտի: Դնեմք թէ տաճկական լեզուին կարգացմունքը դժուար լինելուն պատճառաւ՝ անոր աւելի ժամանակ անցընելը հարկաւոր լինի. բայց հայերենին կարգացմունքը ինչ դժուարութիւն ունի որ այդքան ժամանակ կորսուի անոր համար: Այբուբենը թէ որ աղէկ ոճով սովորեցուի տղայոց, մէկ շաբաթէն աւելի ժամանակ անցընել ամենեւին հարկաւոր չէ՝ գրեթէ անոնց ճանչցընելու համար: Յետոյ

ա խ չ . . , ա ժ ճ ո . . , ր են այբ բա . . , եւ անոնց ետեւէն եկող միավանկ ու բազմավանկ բառերը կարգացընելու համար, եւ մինչեւ աշխատողականացը սովորեցընելու համար՝ միայն մէկ ամիս ժամանակը բաւականէն ալ աւելի է: Ի՞նչ կըսեմ մէկ ամիս. վարպետ վարժապետը՝ տղուն այբուբենը ճանչցընելէն ետքը կրնայ իսկոյն դիմացը ս'ը եւ իցէ գիրք գնել որ կարգայ, ու առաջ՝ օրը մէկ երեսի չափ, յետոյ երկու երեք չորս երես կարգացընէ որ տղուն գրավարժութիւնը բացուի: — Ո՞ւր կ'մնայ այնուհետեւ հեգերէնը, խղեսցալը՝ իրեն արարողութեամբը, մեծ սաղմոսը, Տեոսպուսէնը, Գործք առաքելոցը, նարեկը . . . Անոնք կ'մնան իբրեւ մեծի եւ փոքու ըստ ժամանակին կարգալու, ազօթք ընելու հարկաւոր պատուական գրքեր: Բայց ոչ թէ իբրեւ տղայոց ձեռքը քաշ բերելու ընթերցարաններ ու դասատետարակներ:

Կարելի է որ հարցընէ մէկը զարմանալով թէ ինչպէս կարելի է արգեօք այդ հրաշագործութիւնը. ինչպէս կարելի է առանց նարեկի ու Սաղմոսի չըսեմ՝ նաեւ առանց քերականի ու հեգերենի կարգալ սովորեցընել տղայոց: — Ասոր հնարքը շատ տեսակ է. բայց մէք մէկը միայն գնեմք այս տեղ:

Վարժապետը կառնու կարգալ սկսելու տղաքը, կ'կեցընէ սեւ տախտակին դիմացը. ինքը կաւիճով կգրէ առաջ 8 կամ 12 գիր՝ խոշոր ու մաքուր ձեւերով՝ որչափ կարելի է սպի գրերուն նման, ա, բ, գ, եւ այլն. յետոյ անունները բարձր ձայնով կհնչէ քանի մը անգամ, տղոցն ալ կարգալ հնչել կուտայ, մինչեւ որ ամէնն ալ անսխալ հնչեն ու ձանչնան: Անկից ետքը՝ առանց տախտակին վրայի գրերը սրբելու՝ կուտայ տղոցը ձեռքը կնքեցարանը, կամ ս'ը եւ իցէ գիրք, ու կհրամայէ որ այն տախտակին վրայի ձեւերը դըրքին մէջ դանեն ու իրեն ցուցընեն. եւ այսպէս առաջին դասէն 12 առաջին գրերը կը ձանչնան հինգ վեց աշակերտք միանգամայն. իսկ երկրորդ՝ կամ շատ շատ երրորդ դասէն՝ բոլոր տառերն ալ պէտք է որ անսխալ ձառ սովորին ու ձանչնան: — Նոյն կերպով

կգրէ ու կսովրեցընէ վարժապետը նաեւ վանկերը : այսինքն բեն այբ՝ բա : այբ բեն՝ աբ : այբ զա գիմ՝ ազգ կապելը : քանի մը դասով : եւ այնուհետեւ տղուն ձեռքը ինչ գիրք ալ արուի՝ կրնայ կարգալ : իհարկէ առաջ ծանր : եւ հետ դհեաէ շուտ շուտ :

Այս օրինակով յուսամք թէ ըստ բաւականին կհասկըցուի թէ մեր ազգային գըպրոցներուն մէջ ամէն բանէ առաջ բարեկարգելիքը գասառութեան ոճն է : Բայց այս եւս գիտելու արժանի պարագայ է որ վարժապետը պիտի նայի միշտ քանի մը տղու ի միասին դաս տալ : եւ ոչ թէ զատ զատ . ի միասին սովորող տղայք իրարու նայելով՝ բարի նախանձով մը կվառին : աւելի մտադրութիւն կընեն լսածներուն : եւ առանց ձանձրանալու կսովրին ու միտք կպահեն :

Ահա այս կերպով պիտի սովրեցուի տղայոց նաեւ գիր գրելը : վարժապետը սեւ տախտակին վրայ կգրէ քանի մը գիր : ու կապըսպրէ աշակերտաց որ իրենք ալ անոր տակը նոյն ձեւերը գրեն . երբոր ըստ բաւականին կնմանցընեն՝ կհրամայէ որ սեւաքարի կամ թղթի վրայ նոյն գրերը ձեւացընեն : ու ամենուն առջեւը անոնց պակասութիւնները կըրուցէ : Այս ոճով տղայք գիր գրելու գըժուար կարծուած արհեստը կրնան մէկ շաբթուան մէջ սովրիլ : թէպէտ եւ միակերպ ու մաքուր եւ անսխալ գրել սովրելու համար ժամանակի կարօտ են :

Թուաբանութեան սկզբունքը սովրեցընելուն ոճն ալ շատ գիւրիին է՝ սեւ տախտակին վրայ սկսելով : եւ շատ տղու իմիասին . եւ որչ թէ ինչպէս շատը սովրած են՝ պատառ

մը թղթի վրայ ամէն մէկ տղուն թուանշաններ գրել տալով : ու խեղճ աշակերտաց արգէն չհասկըցած բաները աւելի ալ ձանձրաւի ընելով անոնց :

Քրիստոնէական սովրեցընելու ոճը սրն է : — Շատ գպրոցներու մէջ բռնուած կերպին նայելու որ լինիմք , նիւթապէս սերտել տալն է տղայոց՝ քրիստոնէականին ամէն մէկ հարցմունքն ու պատասխանները : առանց ամենեւին աշխատելու որ խեղճ տղայք գոնէ իրենց ըսած բառերուն պարզ նշանակութիւնը հասկընան : Գպրոցի մը մէջ երեք տարիէ իվեր կարգացող տղու մը հարցուցինք ատենով թէ ի մտառն անբանից ինչ ըսել է . տղան առաջ կարմրեցաւ : յետոյ դարձաւ ըսաւ թէ մատուա . . . Ո՞ գիտէ ասոր նման ուրիշ սրբան ծուռ հասկըցողութիւններ կըրահուէին՝ թէ որ վարժապետը ամենեւին թող չտար որ տղայք առանց հասկընալու բան մը սերտեն : եւ այնուհետեւ զհասպես բառը կապայ հասկըցող : պարսպակաց բառը խոշոր հասկըցող : հաճի բառը մոլեխի հասկըցող : գուք բառը լիւրի հասկըցող տղայք ու մարդիկ շատ չէին գտնուեր :

Աւելորդ կհամարիմք այս տեղ ըսելը թէ քերականութիւնը : պատմութիւնը : աշխարհագրութիւնը եւ ուրիշ ուսմունքները ինչ ոճով սովրեցընելու է . նախ՝ անոր համար որ ասոնց մէջ բռնուելու ոճը աւելի աշխատանքի կարօտ է : եւ երկրորդ՝ անոր համար որ միտք ունիմք ասոնց վրայ ուրիշ ատեն զատ զատ ալ խօսելու : — Առ այժմ՝ յաջորդ յօդուածին մէջ տեսնեմք թէ ճիշդ կանոնադրութիւն ըսածնիս ինչ բան է :

ՏՂՈՅ ՀԱՐԿԱԻՈՐ ԳՐԲԵՐ

ՆՈՐ ԱՅՐԲԵՆԱՐԱՆ. Աշխարհարտ, նոր ոճով շինուած, որով տղայք քիչ ժամանակի մէջ կարդալ կսովրին անսխալ եւ առանց դժուարութեան, մեզի բազմաթիւ աղուոր պատկերներն ալ բաւական են զիրենք գուարձացնելու : Գիճճ է 50 ղ .

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ. Այս Ընթերցարանը շինուած է որ միեւն զմաս զգրքներու մէջ գրավարժութեամբ առաջ կըրպու նամար գործածուած գրաբառ խրրին գրքերու տեղը բռնէ . լեզուն աշխարհարտ լինելով՝ տղայք կարդացածին կհասկընան որով եւ չեն ձանձրանար, մանաւանդ որ Հեղինակը զիրենք գուարձացընելու նամար ամեն ջանք ըրած է, աղուոր աղուոր պատմութիւններ, առակներ, խրատներ ու նարկուոր տեղեկութիւններ գնելով : Գիճճ է 1 ղուպի 50 ղուի .